



Ծ Ի Ա Տ Ա Ն

ԱՄՍԱԳԻՐ


№ 8

ԹԵՄԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՆՅ.

ՕԳՈՍՏՈՍ

1863 ԱՄԻ.

ԹԵՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ


 ուլիս. — Սուրբ էջմիածնայ Սինոդին ընդհանուր կարգադրութեանը համեմատ՝ հրաման գրուեցաւ առ ամենայն շոգեւոր Կառավարութիւնս եւ քահանայս վիճակիս, որ եթէ մահմէտական մը յօժարութիւն ունենայ ընդունելու քրիստոնէական սուրբ հաւատքը՝ ըստ դաւանութեան Հայաստանեայց եկեղեցոյ, պէտք է քահանայք սովրեցընեն անոր նախ քրիստոնէական հաւատոյ ճշմարտութիւնները, այնպէս որ Հաւատամքին խօսքերը բերնուց գիտ-

նալէն զատ՝ անոր ամենայն մասանց բացարուծիւններն ալ կարողանայ տալ. երկու կամ երեք տարի երախայից կարգը մնայ՝ եթէ հարկաւոր է, եւ ապա քննութեամբ եւ վկայութեամբ քահանայից ընդունի սուրբ մկրտութեան խորհուրդը: Միայն թէ երբոր մահմէտական մը մկրտուելէն առաջ՝ մահագուշակ հիւանդութեան մէջ ընկնի, կարելի է նախ մկրտել զինքը, եւ յետոյ երբ առողջանայ՝ հաւատոյ գլխաւոր մասունքը սովրեցընել իրեն:

— Նոյն Սինոդին մէկ կարգադրութիւնն ալ հրատարակուեցաւ ամենայն վիճակաւ-

րաց Ռուսաստանի, որ հոգեւորականաց թիւ-
 ւը չափէ գուրս չշատցընելու համար՝ ար-
 գելուի եպիսկոպոսաց որ հարկատու վիճա-
 կէ եղած անձինքը չկարենան քահանայացը-
 նել կամ ուրիշ եկեղեցական աստիճանի հաս-
 ցընել՝ առանց Սինոդէն հրաման առնելու :

Վիճակիս երեք գլխաւոր ուխտատեղիներ-
 րուն կամ վանքերուն մէկն է Խարասու քա-
 ղաքին մօտ եղած Ս. Փրկիչ վանքը, որոյ
 ուխտը թէպէտ տարին երեք անգամ է, բայց
 գլխաւոր ուխտին օրը Վարդաւառի ութե-
 րորդ օրը կհամարուի : Այս տարի Խարասուի
 բարեպաշտ ժողովուրդը՝ տարւոյս պողաքե-
 րութենէն սիրտ առած, եւ միանգամայն վի-
 ճակիս խաղաղութեան եւ անդորրութեանը
 համար սովորականէն աւելի եռանդ եւ բազ-
 ձանք ցցունելով, յօժարացան աւելի բազմու-
 թեամբ գիմելու այն օրը Ս. Փրկիչ վանքը :

Գերապատիւ Առաջնորդը առաջուց իմա-
 նալով ժողովրդոց գիտաւորութիւնը, այլ
 եւ գրով եւ բանիւ հրաւիրուելով ի նոցանէ,
 Յուլիսի 17-ին ճանապարհ ելաւ Թէոդոսիայ-
 էն, ու իրիկուան դէմ հասաւ Փրկիչ, ուր
 վանքին զաւելայրին ներքեւը հաւաքուած
 գտաւ բազմութիւն արանց եւ կանանց, որ
 եկեղեցականներուն հետ ի միասին ընդ առաջ
 եկեր էին : Անկից թափօրով եւ եկեղեցակա-
 նաց երգեցողութեամբը գնացին ամէնքը
 եկեղեցին, եւ սովորական ազօթքներուն վեր-
 ջանալէն ետքը Առաջնորդը համառօտ ծա-
 նուցման ձեւով շնորհակալութիւն մը ըրաւ
 ժողովրդեան, եւ գնաց իրեն համար պատ-
 րաստուած սենեակը : Այն իրիկունը երեկոյ-
 եան ու հանգստեան ժամերգութիւններէն
 յետոյ՝ Խարասուի երիտասարդները հրա-
 րուեստական խաղեր ձեւացուցին, որոց հա-
 մար օրերով առաջ իրենց մէջ բաւական
 դումար հաւաքեր, եւ միաբանական ու ազ-
 դասիրական հոգով աշխատեր էին :

Երկրորդ օրը Գերապատիւ Առաջնորդը
 ժամարար եղաւ, եւ սուրբ պատարագին ա-
 տենը ատենախօսութիւն մը ըրաւ, որոյ բա-
 վանդակութիւնը այս էր նախ՝ թէ մարդս
 մեծապէս կտրօտ է ամէն ժամանակ եւ ա-
 մէն բանի մէջ աստուածային փրկութեան,
 եւ անով միայն կրնայ իւր հոգին եւ մար-
 ժինը ազատ պահել կամ ազատել աշխարհիս
 փորձանքներէն. ուստի եւ ի զուր կյուսան
 շատ մարդիկ որ փրկուին՝ այսինքն աշ-
 խարհիս փորձանքներէն ազատին՝ իրենց
 խելքովը կամ հարստութեամբը, եւ կամ
 մարդկանց, եւս եւ մեծամեծաց, պաշտպա-
 նութեամբը եւ օգնութեամբը : Երկրորդ՝
 թէ այս աստուածային փրկութեան արժանի
 լինելու համար՝ ամենահարկաւոր է հաս-
 տատուն եւ անդրդուելի հաւատք. վասն զի
 անով միայն կարելի է յուսալ որ եւ իցէ
 ուխտի կատարուելուն, եւ փրկութեան հաս-
 նելու, եւ առանց անոր, այսինքն անհաւա-
 տութեամբ կամ թերահաւատութեամբ՝
 անկարելի է աստուածային փրկութեան ար-
 ժանի լինել : Երրորդ՝ թէ Փրկչին մերոյ
 նոր նոր շնորհացը եւ փրկարար ողորմու-
 թեանը արժանի լինելու համար՝ պէտք է
 որ բարեպաշտ ուխտաւորք երախտագէտ լի-
 նին՝ իրենց մինչեւ ցայնժամ ընդունած հո-
 գեւոր եւ մարմնաւոր շնորհքներուն համար :
 — Այս ամենայն խորատները օրինակներով
 սուրբ գրոց պատմութիւններով ու վկայու-
 թիւններով հաստատուէն ետքը, յորդորեց
 զիրենք ի սէր եւ ի միաբանութիւն քրիս-
 տոնէական, եւ միանգամայն ջանալու որ
 Փրկչավանից այժմու երէցփոխան Պարոնեան
 Յովսէփ Աղային այն վանքին պայծառութեա-
 նը համար ըրած աշխատութիւնները յաջո-
 զութեամբ եւ շուտով վերջանան :

Յետ պատարագին Գերապատիւ Առաջ-
 նորդը երէցփոխանին եւ ուրիշ պատուաւոր
 ժողովրդականաց հետ քալեց աչքէ անցուց
 վանքին շէնքերը, պարտէզը եւ աղբիւրնե-

րը : Եւ որովհետեւ դլխաւոր Լուսաղբիւրին ջուրը պակասած էր, Առաջնորդին յորդորանօքը Չարըխճեան Յակօբ Ազան յօժարակամ սիրով յանձն առաւ իւր ծախքովը նորոգել տալ այն ջրին աւրուած ճանապարհը :

Իրիկուան գէմ բազմութեամբ յուզարկաւորաց ճանապարհ ելաւ Առաջնորդը եւ դարձաւ Թէոդոսիա :

Մէկ քանի օրէն ընդունեցաւ Փրկչականից երէցփոխանէն հետագայ նամակը, զոր արժան կհամարիմք այս տեղ հրատարակել.

« Գերապատիւ Սրբազան Հայր .

„ Քաղցր պարտականութիւն կհամարիմ ինձ ծանուցանել Ձերոյն Սրբազնութեան մինչեւ ցարդ իմ երեցփոխութեանս օրերն եղած նուիրատութիւնքը Ս. Փրկչականքին : Թեպետ եւ բարեպաշտ նուիրատուք ամենեւին կարօտութիւն չունին մեր առանձին շնորհակալութեան՝ իւրեանց բարեգործութեանց համար, նուիրած լինելով զանոնք ի փառս Ամենասուրբ Փրկչին, որ անտարակոյս կընդունի եւ վարձահատոյց կլինի առատապէս, բայց տեսնելով որ այսպիսի գործոց հրատարակութիւնը շատ հարկաւոր է մեր ազգին մէջ, եւ մեծ շարժառիթ եւ բարի օրինակ ուրիշներուն ալ բարեպաշտական եւ ազգասիրական պարտաւորութիւնները ճանաչելու եւ ճշդութեամբ կատարելու, անոր համար պարտաւորեցայ յանուանէ նշանակել թէ նուիրատուքը եւ թէ նուերքը, որ եթէ բարեհաճի Սրբազնութիւն Ձեր, հրամայէ տպագրել պատուական „ Ծիածան “ Օրագրին մէջ : Սոցա անուանքն են ,

„ Տիկին Մարիամ Աղանակեան . որ 1862 Մայիսի 5-ին նորէն շինել տուաւ Խաչկալը՝ վեց պատկերով, որուն ծախքըն եղաւ 658 ռուբլի արծարի :

„ Խաչատուր Պարպեան . որ նուիրեց մէկ սաղաւարտ արծարապատ՝ ակամբք զարդարեալ. զինն 90 ռուբ. արծ. :

„ Յարութիւն Լազարեան Մուրատեանց, որ նուիրեց մէկ զոյգ մեծ աշտանակ մետաղեայ. զինն 62 ռուբ. արծ. :

„ Օվիկ Սեֆերեան . 2 կանթեղ մետաղեայ արծարագծ. զինն 11 ռուբ. 30 քոփ. արծ. :

„ Յարութիւն եւ Յակոբ Տառուտեան . 2 հատ կանթեղ մետաղեայ արծարագծ. զինն 11 ռուբ. 30 քոփ. արծ. :

„ Լուսեղէն Խաննեան . 1 կանթեղ մետաղեայ արծարագծ. զինն 5 ռուբ. 65 քոփ. արծ. :

„ Յովնանէս Յարութիւնեան Պալմեանց . 1 կանթեղ մետաղեայ արծարագծ. զինն 5 ռուբ. 65 քոփ. արծ. :

„ Աղեքսանդր Կարապետեան Թումանեան . երկու քշոց մետաղեայ, զինն 13 ռուբ. արծ. :

„ Ասկեց զատ կան նաեւ տասը երեսելի անձինք, որ տեսնելով Փրկչականից բակին մէջ սենեկաց կարօտութիւնը, խոստացած են մէկ մէկ սենեակ շինել տալ իւրեանց ծախքովը . որոց հիմը անցեալ տարի դրուեցաւ, եւ յուսալի է որ յառաջակայ զարնան շինութիւնները սկսուի եւ աւարտի ետանդուն ջանիք բարեպաշտ խոստացողաց, որք են ,

1. ՅԱԿՈՎԲ ԱՂԱ ՉԱՐԸԽՃԵԱՆ .
2. ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱ ՃԻՎԱԼԻՐՃԵԱՆ .
3. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂԱ ՄՈՒՐԱՏԵԱՆ .
4. ՀԱՃԻ ՊԱՊԻ ՊՈՆԱԶԵԱՆ .
5. ԱԻԵՏԻՔ ՄԻՆԱՍԵԱՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՅ .
6. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂԱ ՊՅԱԶԵԱՆ .
7. ՍԻՄԷՈՆ ԱԻԵՏԻՔԵԱՆ ԹՂԼԸԵԱՆՅ .
8. ԽԱԶՈՒԿ ԵԱՂՃԻԵԱՆ .
9. ԿԱՐԱՊԵՏ ԱԽՃԻԵԱՆ .
10. ԹԷՈՂՈՍԻԱՅԻ ՈՄՆ .

Մատուցանելով համբոյր սրբոյ աջոյն Ձերոյ, մնամ

Սրբազնութեան Ձերում

Խոնարհ ծառայ

Երեցփոխան Ս. Փրկչականից

ՅՈՎՍԷՓ ՊԱՐՈՆԵԱՆ.

Թ. 79

7 Օգոստոսի 1865

Ի ԽԱՐԱՍՈՒ.

